ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ԱՐԵՄ ՄԿՐՏՉՅԱՆ

Ժամանակակից հասարակությունները բնութագրվում են մի շարք նոր հատկություններով, այդ թվում՝ տեղեկատվական տեխնոլոգիաների սրընթաց զարգացման ազդեցությամբ ծագող սոցիալական հաղորդակցման միջնորդավորվածությամբ և դրանով իսկ՝ մարդկանց փոխհարաբերությունների զգալի փոխակերպմամբ: Ժամանակակից հասարակությունների համար հատկանշական է դառնում ատոմիզացումը՝ մարդկանց միջև սոցիալական հեռավորության մեծացումն ու անհատական շահերի գերակայությունը կոլեկտիվ գործունեության հանդեպ: Ինքնության նման փոխակերպումները տեղի են ունենում գլոբալացման գործընթացների, այդ թվում՝ վերազգային միգրացիայի համատեքստում, ինչն առավել դիտարկելի է գյուղացիական ինքնության օրինակով:

Մարդկային շարժունակության բազմակողմանի բնույթի մասին նոր գիտելիքի ի հայտ գալով և դրա մարդկային, սոցիալական և տնտեսական մակարդակներում օգտակար լինելու ներուժով պայմանավորված՝ փոփոխվել է նաև միգրացիայի համաշխարհային դիսկուրսը[1]: Որոշ միջազգային կազմակերպություններ, օրինակ՝ ՄԱԿ-ի միգրացիայի միջազգային կազմակերպությունը, իրենց հետազոտություններով և հավաքած տվյալներով նպաստել են այդ դիսկուրսի փոփոխությանը: Միգրացիան՝ որպես բազմաչափ երևույթ, իր առանձին կողմերով պայմանավորված է արտաքին և ներքին, կամ ինչպես ընդունված է տիպաբանել՝ վանող և ձգող մի շարք գործոններով:

Միգրացիան սահմանվում է որպես ցանցերի ստեղծման գործընթաց, որովհետև այն ավելի ամուր շփումների ցանց է զարգացնում ծագման և ընդունող վայրերի միջև: Այդպիսի ցանցերի ստեղծումը միգրացիոն գործընթացին հնարավորություն է ընձեռում լինելու ինքնուրույն, ինքնակարգավորվող, և դրա վրա չեն ազդում տնտեսական խթանների կարճաժամկետ փոփոխությունները[2]: Ընտանիքները, տնային տնտեսությունները, որոնք ունեն միգրացիոն փորձ, կապեր,

[1] Տե՛ս International Migration and Development: Contributions and Recommendations of the International System. A publication of the United Nations System Chief Executives Board for Coordination, 2013, էջ 19:

[2] Տե՛ս **Portes, A.** (Ed.). The Economic Sociology of Immigration. Essays on Networks, Ethnicity, and Entrepreneurship. New York: Russell Sage Foundation, 1995, էջ 22:

բարեկամներ արտերկրում, ավելի հավանական է, որ արտագաղթեն, քան նրանք, ովքեր չունեն:

Ընտանիքի և տնային տնտեսությունների վերաբերյալ ցանցերի ուսումնասիրությունը թույլ է տալիս միգրացիան դիտել որպես սոցիալական երևույթ և ոչ թե անհատի սեփական որոշման արդյունք կամ էլ տնտեսական կամ քաղաքական հանգամանքների հետևանք. Դա առավելապես այս բոլոր հանգամանքների արդյունք է դրանց փոխազդեցության պայմաններում[3]: Տարբեր հետազոտությունների շրջանակներում տարբեր երկրներում ուսումնասիրված տարբեր ազգության միգրանտների հասարակական փոխհարաբերությունների բնույթը տարբեր է եղել: Տրանսմիգրանտի ներգրավվածությունը հայրենի և հյուրընկալած հասարակություններում վերազգայնության հիմնական պայմանն է: Տրանսմիգրանտները կատարում են տարբեր գործողություններ և ընդունում են որոշումներ սոցիալական փոխհարաբերությունների մի այնպիսի դաշտում, որը բնորոշ է միգրանտների ծագման երկրին և պարունակում է այդ երկրի սոցիալ-մշակութային առանձնահատկությունները[4]:

Հայաստանում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական և քաղաքական գործընթացների հետևանքով շարունակվող աշխատանքային միգրացիան և արտագաղթը փոխակերպում են համայնքային սոցիալական կապերն ու հարաբերությունները՝ տեղափոխելով դրանք Հայաստանից դուրս, ժամանակակից հաղորդակցման միջոցների օգտագործման շնորհիվ ստեղծելով հաղորդակցման, կապերի և փոխհարաբերությունների նոր՝ վերազգային մակարդակ, ընդգրկելով Հայաստանից դուրս գտնվող հին և նորաստեղծ հայկական համայնքներ: Հայկական միգրացիոն ցանցերը, լինելով վերոնշյալ փոխակերպումների հետևանք, կատարում են որոշակի գործառույթներ: Մասնավորապես, վերազգային հայկական սոցիալական ցանցերի ներսում մշտապես շրջանառվում է սոցիալական և ֆինանսական կապիտալը, տեղեկատվությունն ու փոխազդեցությունը հայաստանյան և արտերկրում ձևավորված համայնքների միջև: Հայկական վերազգային սոցիալական ցանցերը դառնում են հայ ժողովրդի գոյության կարևորագույն ձև:

Այդ ամենին զուգահեռ՝ պետք է խոսել այնպիսի հիմնախնդիրների հրատապության մասին, ինչպիսիք են հին սոցիալական կապերի և հարաբերությունների թուլացումն ու խեղվածությունը, հասարակության անդամների միջև վստահության մշակույթի ձևափոխումը, ավանդական համայնքի ներկայացուցիչների կողմից իրենց տնտեսական

---

[3] Տե՛ս **Boyd, M.** Family and Personal Networks in International Migration: Recent Developments and New Agendas. International Migration Review, 1989, 23(3), էջ 638-670:

[4] Տե՛ս **Glick Shiller, N., Basch, L., and C. Blanc-Szanton.** Transnationalism: A new analytic framework for understanding migration, pp. 1-24 In: N. Glick Schiller (Ed.), Towards a Transnational Perspective on Migration: Race, Class, Ethnicity and Nationalism Reconsidered. New York: New York Academy of Sciences, 1992, էջ 1:

խնդիրների լուծման փորձը ոչ թե ավանդական եղանակով, այլ միգրացիոն ցանցի՝ Հայաստանից դուրս փնտրվող կապերի և հարաբերությունների ստեղծման միջոցով: Մեծածավալ աշխատանքային միգրացիայի հետևանքով հայկական ընտանիքը նույնպես դառնում է վերազգային: Ընտանիքի անդամների միջև հաղորդակցումը գնալով դառնում է առավելապես միջնորդավորված, իսկ փոխհարաբերությունները՝ սեգմենտավորված, որը պայմանավորված է տարածական հեռացվածությամբ և ժամանակի փուլայնությամբ՝ միգրացիայի սեզոնայնությանը համապատասխան:

Այս պատճառով ձևափոխվում են գյուղացիական ավանդական համայնքն ու ընտանիքը՝ որպես հայ հասարակության և հայ ինքնության պահպանման կարևորագույն օղակներ: Ուստի հայ գյուղացու ինքնության սոցիոլոգիական հետազոտությունը միգրացիայի և վերազգային սոցիալական ցանցերի համատեքստում տեսական և կիրառական կարևորագույն խնդիր է:

Թեև հայաստանյան իրականության մեջ միգրացիայի երևույթը լայնորեն ուսումնասիրվում է, սակայն ըստ էության բաց է մնում այն հարցը, թե ինչպես են Հայաստանից մեկնողների կողմից ձևավորվող և համալրվող հայկական միգրացիոն ցանցերն ազդում ՀՀ-ում տեղի ունեցող գործընթացների, մասնավորապես՝ հայ գյուղացիական ինքնության պահպանման գործընթացների վրա: Ըստ այդմ, սույնով փորձ է արվում ամփոփելու ՀՀ գյուղերում այդ նպատակով կատարված դաշտային հետազոտական աշխատանքի հիմնական արդյունքները:

Ավանդական սոցիալական ցանցերի փոխակերպումը միգրացիոն ցանցերի կարելի է դիտել որպես տեղական համայնքների ներկայացուցիչների միջև ավանդական սոցիալական կապվածության խաթարում: Այսինքն՝ նոր պայմաններում համայնքի ներկայացուցիչների միջև գործնական կապերը ձևափոխվում են, կամ էլ ավանդական սոցիալական կապերը և հարաբերությունները խզվում են և համայնքից դուրս՝ «վերազգային» սկզբունքով նոր կապեր են ստեղծվում, նոր սոցիալական ցանցեր են ձևավորվում:

Հայկական վերազգային միգրացիոն նոր ցանցերը ԽՍՀՄ փլուզումից հետո հայերի զանգվածային արտագաղթի հետևանքով առաջացած միջազգային սահմանները հատող սոցիալական դաշտեր են, որոնց միջոցով հայ միգրանտները պահպանում են ընտանեկան, տնտեսական, սոցիալական, կազմակերպչական, կրոնական, քաղաքական և այլ հարաբերություններ հայրենիքի հետ: Այդ դաշտերի ձևավորումը և վերարտադրությունը իրականացվում է ժամանակակից հաղորդակցության միջոցների շնորհիվ: Դրանց հաղորդակցական առանձնահատկությունները չափելի են տարածվածության, ուղղվածության, կապի բնույթի, սոցիալական վերահսկողության, էմոցիոնալ հագեցվածության և այլ առումներով: Այսպիսի ցանցերի ազդեցությունը հայաս-

տանյան ներհամայնքային կյանքի փոխակերպումների վրա նախ և առաջ դիտարկելի է միգրացիոն ցանցերում ընդգրկվածների ներհամայնքային կյանքին մասնակցության դրսևորումներում:

Հետազոտության ընթացքում համայնքների առանձին ներկայացուցիչներ, պատասխանելով հարցին, թե ինչպես է իրենց ընտանիքի արտասահմանաբնակ անդամը մասնակցում ընտանեկան կյանքին, նշում էին, որ դա իրենց ներընտանեկան կյանքի կազմակերպման կարևոր նախապայմաններից է: Ըստ հարցվածների՝ այդ մասնակցությունը դրսևորվում է իրենց արտասահմանաբնակ հարազատի կողմից ցուցաբերվող տնտեսական աջակցությամբ, ինչպես նաև ներընտանեկան կյանքի կազմակերպման գործում վերջինիս ունեցած դերակատարությամբ (կարևորվում էին խորհրդատվությունները, ընտանեկան այս կամ այն հարցի շուրջ նրա ունեցած դիրքորոշումը և այլն): Այս կապակցությամբ գերակշռում էր հետևյալ պատասխանը. ***«Յուրաքանչյուր հարցում խորհրդակցում ենք իրար հետ հեռախոսով, բայց ինքն անձամբ ներկա գտնվել չի կարող: Սակայն ամեն հարցում խորհրդակցությունը նրա հետ կա»***:

Այս առիթով առավել խորացված եզրահանգումներ են կատարում փորձագետները: Այսպես, փորձագետներից մեկի խոսքով՝ ***«Շատ ընտանիքներում արտագնա աշխատանքի է մեկնում հենց տան գլխավորը՝ հայրը, և քանի որ այնպիսի սոցիալական, կազմակերպչական հարցեր, ինչպիսիք են երեխաների դաստիարակությունը, ամուսնությունը, կրթություն ստանալը, հիմնականում կարգավորում է հայրը, այլապես նման հարցերը տան գլխավորի բացակայության դեպքում կարող են և չլուծվել»***: Սա լուրջ խնդիր է, քանի որ հաճախ միայն հեռախոսով իրենց ընտանիքների հետ կապ պահող միգրանտները չեն կարողանում կարգավորել այսպիսի խնդիրներն առանց ֆիզիկական ներկայության: Այստեղից հետևում է, որ միգրացիան, որպես այդպիսին, բացասաբար է անդրադառնում ընտանեկան կյանքի կարգավորման վրա:

Հետազոտությամբ ստացված տվյալներից պարզ դարձավ նաև, որ համայնքի ապագայի մասին հարցվողների պատկերացումները պայմանավորվում են նաև միգրացիոն արտաքին ցանցերի ազդեցությամբ: Համայնքի ապագայի տեսլականը հարցվողների պատկերացումներում, ի թիվս այլ գործոնների, ամբողջանում է նաև նրանց սպասելիքներով, որոնք, ըստ վերջիններիս, պայմանավորված են արտաքին միգրացիոն ցանցում ընդգրկվածների օժանդակությամբ: Մասնավորապես կարևորվում է ֆինանսական օժանդակությունը: Այդ են վկայում նաև ***«Եթե հնարավորություն ունենաք, կմեկնե՞ք Ձեր համայնքից»*** հարցին տված պատասխանները, որոնցից հասկանալի է դառնում, որ համայնքի բնակիչները համայնքի ապագան վերջին հաշվով պայմանավորում են արտաքին միգրացիոն ցանցի ազդեցությամբ՝ ***«Գյուղի ա-***

պագան էլ էլի դրսի հետ է կապված: Եթե դուրսը մարդ չեղավ, ապագա չի ունենա»:

Անդրադառնալով ներհամայնքային ցանցերում գործող կապերի որակին՝ կարևոր է որոշարկել դրանցում առկա վստահության մակարդակը: Դատելով հետազոտությունից ստացված տվյալներից՝ կարող ենք ասել, որ վստահությունը մարդկային հարաբերություններում, ըստ էության, հետընթաց է ապրում, որը համայնքի բնակիչների ընկալումներում պայմանավորված է ներկայիս հայաստանյան իրականությանը բնորոշ սոցիալական անհավասարության և բևեռացման աճով: Վստահության մակարդակի լավագույն ցուցիչ է քանակական տվյալներից ստացված հետևյալ տեղեկությունը. իրենց հարևաններին վստահում են հարցվողների 19,6 տոկոսը, համագյուղացիներին՝ 13,9 տոկոսը, համայնքային հեղինակություններին՝ 8,6 տոկոսը:

Սոցիալական անհավասարության հետևանքով հարցվողների միայն 1,7 տոկոսն է վստահում մեծահարուստներին, իսկ տեղական ինքնակառավարման մարմիններին վստահում է ընդհամենը 18,1 տոկոսը:

Այսուհանդերձ, ներհամայնքային ազգակցական կապերը, գյուղացիների բնորոշմամբ, դեռ պահպանվում են: Սրան նպաստում են ժամանակակից հաղորդակցական եղանակները, որոնցից հարցվածները նշում են հեռախոսակապը, ինչպես նաև համացանցը (մասնավորապես «Skype» ծառայությունը): Ըստ հարցվածների պատասխանների՝ ներհամայնքային կապերի պահպանմանը նպաստում են նաև բարեկամական հավաքույթները, որոնք պարբերաբար կազմակերպվում են: Սակայն այս դեպքում խոսքն այն ազգակցական շրջանակների մասին է, որոնք գտնվում են համայնքի ներսում կամ հայաստանյան այլ համայքներում, մինչդեռ միգրացիոն ցանցերում ընդգրկված հարազատների հետ կապերի պահպանումը իրականացվում է հիմնականում վերը նշված կապի միջոցներով: Այդ կապերի պահպանումը պայմանավորված է ոչ միայն զգացմունքային շահադրդումներով (կարոտ), այլ նաև տնտեսական աջակցության և տեղեկություն ստանալու հանգամանքով:

Այս տեսակետից հատկանշական է, որ հարցվածներից մեկի կարծիքով կապի պահպանման իր հիմնական շարժառիթը արտասահմանում բնակվող իր ամուսնուն վերահսկելն է: Ահա այդ պատասխանի մոտավոր գրառումը. ***«Հա, դե էս հեռախոսներով, փառք Աստծու, քնելելնելն էլ կպատմինք իրար: Ամուսնուս հետ կխոսինք գործից ու փողից, հետո կուզեմ իմանալ հո «էս կողմ , էն կողմ» չի՞ էրթա»***:

Հարցման արդյունքների վերլուծությունից պարզվում է, որ ըստ հարցվածների պատկերացումների՝ ներհամայնքային կյանքի փոփոխությունները գլխավորապես արտահայտվում են սոցիալ–տնտեսական, սոցիալ-կառուցվածքային, բարոյահոգեբանական մակարդակնե-

րում: Փորձագետների հետ ունեցած քննարկումից պարզվեց, որ սոցիալ-տնտեսական գործոնով պայմանավորված՝ ներհամայնքային կյանքում խորացել է բևեռացումը հարուստների և աղքատների միջև. ***«Գյուղի բնակչությունը կարելի է բաժանել երկու խմբի՝ հարուստների և աղքատների: Հարուստներն ավելի են հարստացել և առանձնացել մյուսներից»***:

Այս տեսակետից հարցվողները կարևորում են հատկապես անցումը խորհրդային հասարակարգից նոր փուլի և դրա հետևանքով առաջ եկած հիմնախնդիրները, որոնք բնորոշ են հետխորհրդային հասարակությանը: Շատերն այդ փոխակերպումները համարում են բացասական տեղաշարժեր՝ դրանք կապելով բարքերի և բարոյական նորմերի խեղաթյուրման, կենսամակարդակի անկման երևույթների հետ: Այդ են վկայում **«Ի՞նչով է այսօրվա Ձեր գյուղացին տարբերվում տարիներ առաջ եղածից»** հարցին տրված հետևյալ պատասխանները.

«Շատ տարբերություններ կան, առաջ էդքան հոգսեր շատ չեն էղել, ինչխ որ հիմի, առաջ ավելի լավ են ապրել, քանի որ հիմի ամեն բան թանգացել է, աշխատանք չկա»: «Հավատացեք, շատ տեղերում կզգանք, որ փոխվել է: Քանի որ աշխատանք չկա, մարդը՝ բնավորության տեսակետից, շատ է փոխվել, դեպի բացասականը»:

Ուշագրավ է նաև այն, որ հարցվողների զգալի մասը նկատվող փոփոխությունների պատճառ է համարում ներկա միգրացիոն գործընթացները, որոնց հետևանքով համայնքի բնակչությունը ենթարկվում է սոցիալ-կառուցվածքային որակական փոփոխությունների:

Գյուղական ընտանիքի կառուցվածքի փոխակերպումները քայքայում են նախկին գերդաստանները՝ վերածելով դրանք փոքր ընտանիքների, որոնք դառնում են մարդկային համակեցության կազմակերպման բացառիկ կառույցներ: Ամեն ինչ ենթարկվում է այդ կառույցի գործունեությունը ապահովելու հրամայականին: Գյուղական ընտանիքների սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման հարցում շատերը նախապատվությունը տալիս են արտագաղթին:

Աշխատանքային միգրանտները ոչ միայն պահպանում են իրենց ընտանեկան կապերը, այլ նաև իրենց ընտանիքների միջոցով որոշակիորեն ազդում են համայնքի տնտեսական, սոցիոմշակութային և նույնիսկ քաղաքական անցուդարձի վրա: Այդ ամենը հնարավոր է դառնում շնորհիվ հաղորդակցության նոր միջոցների, որոնցով ստեղծվում է հաղորդակցությունների նոր տարածություն: Վերազգային հաղորդակցությունների այդ նոր տարածությունը ցանցային բնույթ ունի, սակայն առայժմ վաղ է խոսել գլոբալ հայկական ցանցի մասին: Ներկայումս գործ ունենք առավելապես ընտանեկան հայկական վերազգային միգրացիոն ցանցերի հետ, որոնց տնտեսական ազդեցությունը նշանակալից չէ բուն համայնքի վրա, որովհետև ներդրումներ, որպես այդպիսին, համայնքում ըստ էության չեն կատարվում, ուստի ուղարկված

գումարները լուծում են համայնքի միայն որոշակի ներկայացուցիչների խնդիրները և էական ազդեցություն չեն ունենում համայնքի սոցիալական կյանքի բարելավման վրա: Ասվածի լավագույն վկայությունն է փորձագետներից մեկի հետևյալ մեկնաբանությունը. ***«Համայնքի համար ոչ ոք էլ ներդրում չի կատարում: Պատահում է, որ երբ մեկը իրենց բարեկամներից հիվանդանում է կամ նեղության մեջ է ընկնում, թեթևակի օգնում են: Կոնկրետ օրինակ չեմ կարող ասել՝ ինչպիսի օգնություն կարող են միգրանտները ցուցաբերել մեր համայնքի բնակիչներին, բայց այսպիսի երևույթ կա, որ եթե արտերկրում լավ գործ են գտնում, ոչ թե լավության կամ օգնության համար են կանչում իրենց ծանոթներին, այլ որպես էժան աշխատուժ»***:

Այսպիսով, իրականացված սոցիոլոգիական հետազոտությունը փաստում է, որ հայաստանյան գյուղական համայնքներում տեղի են ունենում սոցիալական կառուցվածքային փոփոխություններ, որոնց զուգահեռ փոխվում են նաև հայ գյուղացիների արժեքային դիրքորոշումները և ընկալումները: Ըստ այդմ՝ փոխվել է նաև ժամանակակից հայ գյուղացու կերպարի ընկալումը: Եթե նախկինում նա՝ հայ գյուղացին, իր ինքնաընկալումներով ավանդապաշտ էր, աշխատասեր, օգնության ձեռք մեկնող, ապա այժմ նման բնութագրիչներն աստիճանաբար մղվում են հետին պլան:

Նախապատվությունը ավելի տրվում է սեփական ուժերին ապավինելուն և ինքնօգնությանը, իսկ ընտանեկան միջավայրի (կամ սոցիալական մերձավոր միջավայրի) կարծիքը այլևս քիչ է կարևորվում, կտրուկ նվազել է համայնքի ընդհանուր խնդիրների լուծման գործընթացներին մասնակցությունը: Գյուղացու ինքնության նման փոխակերպումները հանգեցնում են միջանձնային հարաբերություններում փոխադարձ վստահության պակասի, որի հետևանքով թուլանում ու խաթարվում են նախկինում բավականաչափ ամուր համայնքային սոցիալական կապերն ու վերահսկողությունը:

Այստեղից հետևում է, որ ավանդական սոցիալական կապերի փոխակերպումը միգրացիոն ցանցերի կարող ենք դիտել որպես տեղական համայնքների ներկայացուցիչների միջև ավանդական սոցիալական կապվածության խաթարում, այն է՝ նոր պայմաններում համայնքի ներկայացուցիչների միջև գործնական կապերի ձևափոխում այլ կապերի, կամ էլ ավանդական սոցիալական կապերի և հարաբերությունների խզում և համայնքից դուրս նոր կապերի ստեղծում՝ նոր ընտանեկան ցանցերի ձևավորում «վերազգային» սկզբունքով: Վերոնշյալ սոցիալական գործընթացները ոչ միայն փոխակերպում են հայաստանյան գյուղական համայնքներում առկա սոցիալական կապերն ու հարաբերությունները՝ դրանք դարձնելով վերազգային, այլև վկայում են հայաստանյան հասարակության ներսում առկա այնպիսի հիմնախնդիրների հրատապության մասին, ինչպիսիք են՝ սոցիալական կա-

պերի և հարաբերությունների թուլացումն ու խեղվածությունը, հասարակության անդամների միջև վստահության մշակույթի խեղաթյուրումը, հայ գյուղացու ավանդական ինքնության կորուստը, ավանդական համայնքի ներկայացուցիչների՝ իրենց տնտեսական խնդիրների լուծումը Հայաստանից դուրս գտնվող կապերի և հարաբերությունների մեջ փնտրելը:

Բանալի բառեր – *սոցիոլոգիական հետազոտություն, գյուղացիական ինքնություն, միգրացիա, վերազգային միգրացիոն ցանցեր, սոցիալական կառուցվածքային փոփոխություններ, վստահություն*

АРЕМ МКРТЧЯН – ***Проблема крестьянской идентичности в контексте миграции.*** – Трансформацию традиционных функциональных связей в миграционные сети можно рассматривать как их модификацию и нарушение традиционной социальной взаимоувязки между членами локальных общин в новых условиях. В этой трансформации можно также усмотреть разрыв традиционных социальных связей и отношений и создание новых, а также семейных сетей по «транснациональному» принципу. Эти процессы не только меняют существующие социальные связи и отношения в сельских армянских общинах, делая их транснациональными, но и свидетельствуют об актуальности таких проблем, как ослабление и коррозия внутриобщинных отношений. Искажаются основы культуры доверия между членами общества, утрачивается традиционная идентичность крестьянина, члены общины решают свои экономические вопросы созданием миграционной сети вне Армении.

Ключевые слова: *социологическое исследование, крестьянская идентичность, транснациональные миграционные сети, социальные структурные изменения, доверие*

AREM MKRTCHYAN – ***The Problem of Peasant Identity in the Context of Migration.*** – The transformation of traditional social networks to migration networks can be viewed as an undermining of traditional social cohesion between local community representatives. That is the modification of functional connections between community representatives or a disruption of traditional social ties and creation of new ties outside the community-formation of family networks on the principle of “transnationality”. By their nature these social processes do not only transform the existing social ties and relations in rural communities, making them transnational, but they also demonstrate the urgency of the problems inside the society, such as the weakening and distortion of social ties and relations, distortion of trust between the members of society, the loss of traditional identity of Armenian peasants, the attempt of community representatives to solve their economic problems through migration networks, by establishment of relations abroad.

Key words: *sociological research, peasant identity, migration, transnational migration networks, social structural changes, trust*